Ուղղությունը. Ֆինանսներ, բակալավրիատ, հեռակա ուսուցում

Առարկա. Ձեռնարկությունների տնտեսագիտություն

Անոտացիա

Աշխատատարությունը՝ *4 կրեդիտ, 144 ակադեմիական ժամ*

Ստուգարք

Համառոտ նկարագրություն. Այս դասընթացը դիտարկում է ընկերության ձևավորման, գործունեության և զարգացման կազմակերպակառավարչական և տնտեսատեխնոլոգիական հիմնական կարևոր հարցերը: Շուկայական պայմաններում ընկերությունը կարևորագույն բաղադրիչը, անհրաժեշտ տարրը, և այդ պատճառով անհրաժեշտ է դիտարկել ընկերության գործունեության ձևերն ու մեթոդները: Ժամանակակից պահանջ է երիտասարդ տնտեսագետներին դասընթացի հիմունքների դասավանդումը, արտադրության տնտեսագիտության և կազմակերպման հարցերի ուսումնասիրումը, ընկերությունների կառավարման և մարքեթինգի հասկացություններին և սկզբունքներին ծանոթացումը, ընկերությունների նյութատեխնիկական և աշխատանքային ներուժի կազմակերպման տեսական հիմունքների դասավանդումը:

Դասընթացի նպատակն է ուսանողների ծանոթացումը տնտեսական սուբյեկտների գործունեության, շամանակակից տնտեսական մեխանիզմի հետ՝ գործող շուկայական և մրցակցային պայմաններում: Գիտելիքների ձեռքբերումը ուսանողներին թույլ է տալիս պատկերացում ձևավորել ձեռնարկության տնտեսագիության մասին, զարգացնել ժամանակակից ձեռնարկությունների բնույթի ըմբռնումը, որոշակիորեն կօգնեն մշակել տնտեսագիտական որոշումների ձևավորման հմտություններ, կօգնեն վերլուծել և հիմնավորել մրցակցային շուկայական միջավայրում ժամանակակից ձեռնարկությունների վարվելակերպի ռազմավարությունները և մարտավարությունները:

Կապը ուսումնական պլանի այլ առարկաների հետ. «Միկրոէկոնոմիկա», «Մաթեմատիկական վերլուծություն»: